ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

2025 թվականի սեպտեմբերի 11-ին և 18-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Բանկ) միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» (Ծրագիր) վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր):

Ծրագրի ֆինանսավորման նպատակով Համաձայնագրով Բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է **70.4 միլիոն եվրո**՝ իսկ ՀՀ կառավարությունը պարտավորվում է համաֆինանսավորել հարկերը, տուրքերը, Ծրագրի իրականացման հետ կապված գործառնական ծախսերը և մնացած այն ծախսերը, որոնք վարկային միջոցներից թույլատրելի չէ իրականացնել:

Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը՝ ստորագրումից հետո 180 օր, իսկ Ծրագրի տևողությունը՝ ուժի մեջ մտնելուց հետո 5 տարի: Համաֆինանսավորման համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը՝ 2026թ. մարտի 31:

Ծրագրի հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները

Տեսլականը՝ կլիմայի դիմակայուն ոռոգման և ջրամատակարարման համակարգերի ներդրում, որոնք կնպաստեն տնտեսական աճին, պարենային անվտանգությանը և տարածաշրջանային համաչափ զարգացմանը, բարելավել ոլորտային կառավարման մեխանիզմները, ամրապնդել ինստիտուցիոնալ կարողությունները, ներդնել արդիական ենթակառուցվածքներ, բարձրացնել ծառայությունների ֆինանսական կայունությունը, նվազեցնել կլիմայական ռիսկերը և խթանել կլիմայի հարմարվողականությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

1. ջրային ոլորտի բարեփոխում և կլիմայադիմացկուն ոռոգման և գյուղական ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների ինստիտուցիոնալ հզորացում
2. գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում
3. ոռոգման ենթակառուցվածքների և համակարգերի կառավարման արդիականացում
4. ծրագրի կառավարում:

Նախատեսվում է նաև **Ծրագրի համաֆինանսավորում** Զարգացման ֆրանսիական գործակալության (Agence Française de Développement) կողմից:

Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուներն են՝

- գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները և ջրօգտագործողների ընկերությունները (ՋՕԸ-ներ),
- գյուղական համայնքների բնակիչները, որոնք կստանան բարելավված ջրամատակարարում և ջրահեռացում,
- Ջրային կոմիտեն և «Ջրառ» ՓԲԸ-ն, որոնք կզարգացնեն կառավարման և պլանավորման կարողությունները,
- տեղական ինքնակառավարման մարմինները և մարզային կառույցները,
- քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչները:

Հաշվի առնելով Հայաստանի ջրային ոլորտում առկա խնդիրների բազմազան և փոխկապակցված բնույթը՝ ոռոգման ենթակառուցվածքների հնությունը, գյուղական բնակչության սահմանափակ հասանելիությունը ապահով ջրամատակարարման ծառայությունների, ինչպես նաև կլիմայական փոփոխություններից բխող վտանգների աճը,

առաջարկվող Ծրագիրը նպատակ ունի կիրառել ինտեգրված, բազմափուլային մոտեցում՝ ապահովելու ոլորտի կայուն զարգացումը և արդյունավետ կառավարումը:

Ծրագիրը հանդիսանում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող անցյալ նախաձեռնությունների տրամաբանական շարունակությունը, որը կապահովի անհրաժեշտ քաղաքական, ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային բարեփոխումների ներդրում:

Բազմափուլ ծրագրային մոտեցման (MPA) կիրառման հիմնավորումը

MPA-ը ներկայացնում է 10-ամյա ժամանակահատվածում իրականացվող ծրագիր՝ բաղկացած երկու փուլից, որը նպատակ ունի.

- ուժեղացնել ինստիտուցիոնալ կարողությունները, հատկապես՝ ջրառ և ջրօգտագործող ընկերությունների և տեղական կառույցների կարողությունների զարգացման միջոցով,
- ապահովել ծառայությունների ֆինանսական կայունություն՝ սակագնային բարեփոխումների, ծախսերի փոխհատուցման և մասնավոր հատվածի ներգրավման խթանման միջոցով,
- օգտագործել տեղային և մասշտաբայնացման մեխանիզմներ՝ նախքան լայնածավալ ներդրումների իրականացումը (piloting and scaling),
- ստեղծել բարենպաստ միջավայր մասնավոր ներդրումների համար:

Ծրագրի արդյունավետ իրագործման համար նախատեսվում է ստեղծել՝

- **Ծրագրի ղեկավար կոմիտե**, որը կգործի Համաշխարհային բանկի կողմից հաստատված լիազորություններով և կազմով՝ ապահովելով ռազմավարական վերահսկողություն, միջգերատեսչական համագործակցություն և հաշվետվողականություն:
- **Ծրագրի իրականացման խումբ՝** ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կազմում, որը կիրականացնի ծրագրի տեխնիկական, ֆինանսական և գնումների գործընթացները:
- **Գործառնական ձեռնարկ** (Operations Manual)՝ Համաշխարհային բանկի կողմից հաստատված ձևաչափով, որը կսահմանի ծրագրի իրականացման ընթացակարգերը, վերահսկողության և հաշվետվության մեխանիզմները:

Այս ինստիտուցիոնալ կառուցվածքը հնարավորություն կտա ապահովել ծրագրի արդյունավետ կառավարումը և միջազգային ֆինանսական կառույցների պահանջներին համապատասխան հաշվետվողականությունը:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Ծրագիրը լիովին համահունչ է հետևյալ բարձր մակարդակի ռազմավարական փաստաթղթերին՝

- Հայաստանի Երկրի Գործընկերության Շրջանակ (CPF), 2025-2029 թթ.,
- Ջրային ոլորտի հարմարվողականության ծրագիր (2022-2026 թթ.),
- Կայուն զարգացման նպատակներ (SDG 2 և SDG 6):